Գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարությունում
«06» ապրիլի 2017 թվական
Պետական գրանցման համար 1111738
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» մարտի 2017 թվական N 112-Ն

ք. Ստեփանակերտ

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4.1-ԻՆ ՄԱՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի 10-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Սահմանել «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9.1-ին հոդվածի 4.1-ին մասի պահանջները բավարարելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն հավելվածի:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ֆինանսների նախարարի
2017 թվականի մարտի 27-ի
N 112-Ն հրամանի

Ձև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 9.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 4.1-ԻՆ ՄԱՍԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ	Փաստաթղթի հերթական համարը՝ _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Անհատ ձեռնարկատեր վարկառուի անունը, ազգանունը և հայրանունը	ՀԿՀՀ
Անհատ ձեռնարկատեր համավարկառուի անունը, ազգանունը և հայրանունը	ՀԿՀՀ
Ֆիզիկական անձ վարկառուի անունը, ազգանունը և հայրանունը	ՀԾՀ
Ֆիզիկական անձ համավարկառուի անունը, ազգանունը և հայրանունը	ՀԾՀ

Սույնով հայտարարում եմ, որ

1) փաստացի բնակվում եմ _____ հասցեում գտնվող բնակարանում (անհատական բնակելի տանը)՝

այո ☐ ոչ ☐

հաշվետու եռամսյակում ամբողջությամբ բնակված չլինելու դեպքում՝ նշել բնակության սկիզբը և վերջը 20 ____ թվականի _____ ___ից մինչև _____ _____-ը.

2) բնակարանը (անհատական բնակելի տունը) կամ դրա որևէ մասը հանձնված է (հանձնված չէ) (անհրաժեշտն ընդգծել) վարձակալության կամ մերձավոր ազգակցական կապի մեջ չգտնվող անձանց անհատույց օգտագործման.

3) բնակարանը (անհատական բնակելի տունը) կամ դրա որևէ մասը 20 ____ թվականի _____ ____-ից անհատույց օգտագործման իրավունքով հանձնված է մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձի՝

այո ☐ ոչ ☐

«այո» վանդակը նշված լինելու դեպքում՝ նշել անունը, ազգանունը, հայրանունը, ազգակցական կապը՝ կցելով մերձավոր ազգակցական կապը հիմնավորող փաստաթղթերի պատճենները* (կցվում են միայն առաջին անգամ ներկայացնելիս) _____ թերթ:

_____ _____

անունը, ազգանունը, հայրանունը — ազգակցական կապը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում ներառվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

_____ _____

(վարկառուի (համավարկառուի) անունը, ազգանունը) (ստորագրությունը)

«_____» _____ 20 ____ թ.

* - ծնող(ներ)ի դեպքում՝ ծնող(ներ)ի անձնագրերի (նույնականացման քարտերի) և վարկառուի (համավարկառուի) ծննդյան վկայականների, անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Եթե ծնող(ներ)ի անունը և (կամ) ազգանունը չեն համապատասխանում վարկառուի (համավարկառուի) ծննդյան վկայականում ծնող(ներ)ի անվան և (կամ) ազգանվան հետ, ապա ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծնող(ներ)ի հավաստիացման վերաբերյալ տեղեկանք.

- ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայականի և ամուսինների անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները.

- երեխայի (երեխաների) դեպքում՝ երեխայի (երեխաների) ծննդյան վկայականների, անձնագրերի (նույնականացման քարտերի) և վարկառուի (համավարկառուի) անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Եթե ծննդյան վկայականում երեխայի (երեխաների) ծնող(ներ)ի անունը և (կամ) ազգանունը չեն համապատասխանում վարկառուի (համավարկառուի) անվան և (կամ) ազգանվան հետ, ապա ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծնող(ներ)ի հավաստիացման վերաբերյալ տեղեկանք.

- եղբոր (եղբայրների) (քրոջ (քույրերի)) դեպքում՝ եղբոր (եղբայրների) (քրոջ (քույրերի)) և վարկառուի (համավարկառուի) ծննդյան վկայականների ու անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Ծննդյան վկայականներում ծնող(ներ)ի անունը և (կամ) ազգանունը չհամընկնելու դեպքում ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից եղբոր (եղբայրների) (քրոջ (քույրերի)) հավաստիացման վերաբերյալ տեղեկանք.

- պապի (տատի) դեպքում՝ պապի (տատի) անձնագրերի (նույնականացման քարտերի) և վարկառուի (համավարկառուի) ու վարկառուի (համավարկառուի) ծնող(ներ)ի ծննդյան վկայականների, անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Եթե պապի (տատի) անունը և (կամ) ազգանունը չեն համապատասխանում վարկառուի (համավարկառուի) ծնող(ներ)ի ծննդյան վկայականում ծնող(ներ)ի անվան և (կամ) ազգանվան հետ և (կամ) եթե վարկառուի (համավարկառուի) ծնող(ներ)ի անունը և (կամ) ազգանունը չեն համապատասխանում վարկառուի (համավարկառուի) ծննդյան վկայականում ծնող(ներ)ի անվան և (կամ) ազգանվան հետ, ապա ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծնող(ներ)ի հավաստիացման վերաբերյալ տեղեկանք.

- թոռան (թոռների) դեպքում՝ թոռան (թոռների) և վարկառուի (համավարկառուի) երեխայի (երեխաների) ծննդյան վկայականների, անձնագրերի (նույնականացման քարտերի) ու վարկառուի (համավարկառուի) անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Եթե վարկառուի (համավարկառուի) երեխայի ծննդյան վկայականում վարկառուի (համավարկառուի) երեխայի (երեխաների) ծնող(ներ)ի անունը և (կամ) ազգանունը չեն համապատասխանում վարկառուի (համավարկառուի) անվան և (կամ) ազգանվան հետ և (կամ) եթե վարկառուի (համավարկառուի) թոռան ծննդյան վկայականում վարկառուի (համավարկառուի) երեխայի (երեխաների) անունը և (կամ) ազգանունը չեն համապատասխանում վարկառուի (համավարկառուի) երեխաների անվան և (կամ) ազգանվան հետ, ապա ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից ծնող(ներ)ի հավաստիացման վերաբերյալ տեղեկանք:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**